



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«23» հունիս 2023թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 280-Ղ հ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի
N 396-Ա ՀՐԱՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով և հիմք ընդունելով «Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ 2023 թվականի հունվարի 17-ի թիվ 1.1/2023 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Նկատի ունենալով, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի հուլիսի 30-ի թիվ 396-Ա հրամանով «Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/, Երևան/UDYZ/-Բելգորոդ/ՍՍՕԲ/, Երևան/UDYZ/-Աստրախան/ՍՐՎԱ/ ուղղությունների համար տրամադրված արտոնության մասով չեն պահպանվել «Պետական տուրքի մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով սահմանված պահանջները՝ ուժը կորցրած ճանաչել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի հուլիսի 30-ի «Սիբիր» ավիաընկերություն» հանրային բաժնետիրական ընկերությանը Հայաստանի

Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ և «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնություն տալու մասին» թիվ 396-Ա հրամանի 2-րդ և 3-րդ կետերը՝ տրամադրված արտոնության չօգտագործված մասով:

2" Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանից բխող փոփոխությունների տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

6/23/2023

X



ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Signed by: ASATRYAN SIMON 3811700103